

## Հարց

**Ինչպե՞ս պետք է տեղակայվեն առևտրային հաշվառքի սարքերը:**

### Պատասխան

Առևտրային հաշվառքի սարքերը պետք է տեղակայվեն այնպես, որ.

1.Բացառվի նրանց մեխանիկական վնասվածքների կամ միջավայրի անթույլատրելի ազդեցության հնարավորությունը,

2.Բացառվի կողմնակի անձանց միջամտությունը հաշվառքի սարքերի միացման սխեմային և նրանց աշխատանքին,

3.Ապահովվի սպառողի և մատակարարի ներկայացուցչի համար հաշվիչի ցուցմունքի տեսանելիությունը,

4.Ապահովվի հաշվառքի սարքերի պահպանումը,

5.Վտանգ չսպառնա մարդկանց կյանքին և առողջությանը:

Բնակչության առևտրային հաշվիչները տեղակայվում են ընդհանուր կամ անհատական արկղերում: Բազմաբնակարան շենքերում առևտրային հաշվիչները տեղակայվում են յուրաքանչյուր մուտքի ընդհանուր արկղերում: Արկղերի տեղակայման վայրը ընտրվում է այնպես, որ ապահովվի էլեկտրական լարման սահմանված մեծությունը սպառողի ընդունման վահանակի վրա: